ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

«26» 03 2009թ. N 03/16/1669-09

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ՀՀ կառ. 11.03.2009թ.
թիվ 02/10.1/1602-09

Հարգելի պարոն Սարգսյան

Ի լրումն ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալի 24.03.2009թ. 03/16/1613-09 գրության, ներկայացնում եմ հետևյալ առաջարկությունը՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Հ. Հակոբյանի, Լ. Սարգսյանի, Ս. Ավետիսյանի, Է. Շարմազանովի և Գ. Մելիքյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծի 1-ին հոդվածը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ մասի «անհատույց տրամադրվում են, մինչև 2007 թվականի հունիսի 30-ը» բառերը փոխարինել «տրամադրվում են անհատույց» բառերով:»:

Կից ներկայացվում են ՀՀ ֆինանսների և ՀՀ արդարադատության նախարարությունների, ինչպես նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի առաջարկությունները՝ ներկայացված նախագծի վերաբերյալ:

Առդիր՝ 4 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

52

025-3904
26 03 09

Տեղական ինքնակառավարման
վարչություն՝ ☎ 511-347